4. Սույն հրամանը դիտավորությամբ չկատարողները կամ ոչ պատշաճ կատարողները ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև առանց ծանուցման աշխատանքային պայմանագրի միակողմանի լուծումը:
5. Սույն հրամանի վերաբերյալ պարզաբանում և մեկնաբանություն ստանալու նպատակով պետք է դիմել ԵՀՀ գլխավոր տնօրենին: ԵՀՀ գլխավոր տնօրենին դիմելը չի կասեցնում սույն հրամանի գործողությունը տվյալ անձի նկատմամբ:
6. Այն անձինք, որոնք գտնում են, որ որևէ պատճառով չեն կարող պահպանել սույն Հրամանով նախատեսված կանխարգելիչ միջոցառումները, կարող են իրենց նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը՝ պահպանելով համաճարակի ավարտից հետո փոխադարձ համաձայնությամբ աշխատանքում վերականգնվելու հնարավորությունը՝ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում:
7. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրա գործողության դադարեցման մասին համապատասխան որոշման ընդունումը:
8. ԵՀՀ գլխավոր տնօրենը անհապաղ ապահովում է սույն հրամանի տրամադրումը ԵՀՀ աշխատակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով, որը համարվում է պատշաճ ծանուցում:

*Ծանոթություն.

- 1) Հանրային միջոցառում է համարվում ցանկացած վայրում տեղի ունեցող ծննդյան տոնակատարությունը, կրոնական արարողությունը, հարսանիքը, նշանդրեքը, սգո արարողությունը, համերգ, թատրոն, ցուցահանդես, թանգարան, կինո այցելությունը և այլ հանրային ծեսը, որին մասնակցում են ընտանիքի մերձավոր անդամներից բացի այլ մարդիկ՝ անկախ այդ մարդկանց քանակից:
- 2) Սույն Հրամանի իմաստով ընտանիքի մերձավոր անդամներ են համարվում մայրը, հայրը, նրանց ծնողները (տատերը, պապերը), երեխաները:



Գլխավոր տնօրեն

An order from the CEO of Eurasia Partnership Foundation on work management in times of Covid-19 pandemic (into effect from March 24, 2020, 11:55 pm)

In addition to the order from the CEO of Eurasia Partnership Foundation (is attached), which came into effect from March 16, 2020, 11:55 pm and was abided by Order N16 of the RA Commendent (is attached), comes into effect from March 16, 2020, 11:59 pm

The order mentions the regulations concerning the ban on visits to EPF office (except emergency situations) and rules on self-isolation, ensuring a two-way communication with the CEO of Eurasia Partnership Foundationa and the RA Commendent.

Below is the full version of the document in Armenian.

**Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամի գլխավոր տնօրենի
հրաման
Մարտի 24, 2020 թ., ժ. 23.55**

Ի հավելումն ԵՀՀ գլխավոր տնօրենի հրամանի (կցված է), որը ուժի մեջ է մտել 2020թ. մարտի 16-ի ժ. 23.55-ից, և ենթարկվելով ՀՀ Պարետի N 16 հրամանին (կցված է), որը ուժի մեջ է մտնում 2020թ. մարտի 16-ի ժ. 23.59-ից,

Շնորհակալություն հայտնելով մարտի 16-ից առ այսօր արդյունավետ հեռահար աշխատանքի համար,

Ցանկանալով առողջություն ձեզ և համայն մարդկությանը,

Հաշվի առնելով այս օրերին մեր բոլորի հավելյալ պատասխանատու վարքի կարիքը,

Հաշվի առնելով հնարավոր անկազմակերպ գործողությունների հավանականությունը, ինչը կարող է խուճապ առաջացնել,

Հորդորելով պահպանել սառը դատողությունը,

Հրամայում եմ.

9. 2020 թ. մարտի 24-ի ժամը 23:59-ից մինչև 2020 թ. մարտի 31-ը՝ ժամը 23:59-ը՝ ԵՀՀ բոլոր մշտական աշխատակիցներին, ներառյալ ծառայությունների տևական պայմանագիր ունեցողներին, փորձնակներին (այսուհետ՝ ԵՀՀ աշխատակից/ներ) արգելել ԵՀՀ գրասենյակ այցելել և ԵՀՀ գրասենյակ այցելելու նպատակով դուրս գալ իրենց տնից կամ իրենց նախընտրած ինքնամեկուսացման վայրից:
10. Բացառիկ դեպքերում, երբ գոյություն ունի ԵՀՀ-ի գործունեության համար կենսական նշանակություն ունեցող պատճառ, ԵՀՀ աշխատակիցը իրավունք ունի այցելելու ԵՀՀ գրասենյակ և/կամ այլ հիմնարկ, օրինակ բանկ, և այդ նպատակով դուրս գալու իր տնից կամ իր նախընտրած ինքնամեկուսացման վայրերից, նախապես թույլտվություն ստանալով Գլխավոր տնօրենից: Նշված նպատակով տնից կամ ինքնամեկուսացման վայրից դուրս գալու պայմանները պետք է խստորեն համապատասխանեցվեն ՀՀ Պարետի N 16 հրամանի կետերին և դրանց հասանելի պարզաբանումներին (կցված է, թարմացվում է):
11. Կետ 2-ում նշված նպատակով տնից կամ նախընտրած ինքնամեկուսացման վայրից դուրս գալու դեպքում անպայման անհրաժեշտ է.
 - 11.1 Լրացնել Պարետի N 16 որոշմամբ սահմանված տեղաշարժման թերթիկը (օրինակը կցված է). Թերթիկը կարելի է կազմել և լրացնել ձեռագիր եղանակով:
 - 11.2 Տեղաշարժման թերթիկում նշել ամսաթիվ, անուն ազգանուն հայրանուն, էլքի հասցեն, այցելության վայրի հասցեն և անվանումը, նպատակ, վերադարձի ակնկալվող ժամը:
 - 11.3 Ունենալ անձնագիր կամ նույնականացման քարտ:
12. Այն դեպքում, եթե պարետային հսկողություն իրականացնող ոստիկանները խոչընդոտեն ԵՀՀ աշխատակցի այցելությունը կետ 2-ում նշված նպատակով ԵՀՀ գրասենյակ, ԵՀՀ աշխատակիցը պարտավոր է անմիջապես տեղյակ պահել ԵՀՀ

Գլխավոր տնօրենին զանգահարելով 091 017391 հեռախոսահամարով, կամ փոխտնօրենին՝ Վազգեն Կարապետյանին 091438838 հեռախոսահամարով:

13. Այլ պատճառներով իրենց տնից կամ նախընտրած ինքնամեկուսացման վայրից դուրս եկած և պարետային հսկողություն իրականացնող ոստիկանների կողմից վարչական տույժի/տուգանքի ենթարկված ԵՀՀ աշխատակիցները պետք է անհապաղ այդ մասին տեղյակ պահեն ԵՀՀ Գլխավոր տնօրենին կամ փոխտնօրենին նշված հեռախոսահամարներով:
14. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրա գործողության դադարեցման մասին համապատասխան որոշման ընդունումը:
15. ԵՀՀ գլխավոր տնօրենը անհապաղ ապահովում է սույն հրամանի տրամադրումը ԵՀՀ աշխատակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով, որը համարվում է պատշաճ ծանուցում:

*Օանդություններ.

- 3) ԵՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող պատճառ կարող է համարվել, օրինակ, սերվերի խափանումը, կարևոր նշանակության փաստաթղթի կնքումը և սքանավորումը, գրասենյակային բույսերի ջրելը :
- 4) Հորդորում եմ ՀՀ Պարետի N16 հրամանի վերաբերյալ իրազեկել ձեր ընտանիքների բոլոր անդամներին, բոլոր մերձավորներին և բարեկամներին: Հորդորում եմ պահպանել հանգստությունը, չմատնվել խուճապի և շարունակել արդյունավետ աշխատանքը հեռահար պայմանում: Ցանկացած հարցով դիմեք ինձ և կամ ձեր անմիջական ղեկավարին, կամ SMT խմբին:
- 5) Պարետի N16 հրամանում չճշգրտված որոշ հարցերի պարզաբանումները կարելի է գտնել հետևյալ հղումով.
http://www.newsline.am/news/parzabanowm_hh_amboghj_taracqowm_teghasharjhi_sahmanapakman_veraberyal/2020-03-24-6232
Մասնավորապես՝ ունենալով անձնագիրը կամ նույնականացման քարտը, ինչպես նաև լրացված ձևաթուղթը՝ կարող եք տնից դուրս գալ խանութ, դեղատուն, ֆիզիկական կազմուրիչ նպատակներով, մերձավորի խնամքի վայր հասնելու նպատակով և այլն: Մակայն աշխատեք այդ առիթները սահմանափակել, և դուրս եկեք, եթե հնարավոր է, միայնակ:

Գևորգ Մեխակյան

Գևորգ Տեր-Գաբրիելյան,

Գլխավոր տնօրեն

EPF communication strategy in the new times, April 1, 2020

In order to enhance the quality of communication in times of Covid-19 pandemic, several adjustments have been made to EPF communication strategy, namely:

- online lectures and meetings to be organized via Zoom platform;
- EPF newsletters to be circulated more frequently than before;
- Covid-related surveys to be posted on EPF Facebook page;
- new tools to be used that ensure the interactivity of online meetings.

Below is the full version of the document in Armenian.

ԵՀՀ հաղորդակցությունը նոր ժամանակներում Ապրիլի 1, 2020 թ.

Առաջիկա գործողությունները

- Առցանց դասախոսություններ
 - o Ծրագրային թիմերի հետ կապ հաստատել և իրենցից հավաքագրել դասախոսությունների թեմաները թեմաները, որոնք կկազմակերպվեն լայվ տարբերակով: Դասախոսությունները կարող են լինել տարբեր թեմաների, օրինակ՝ քննադատական մտածողություն, մեդիա գրագիտություն, մարդու իրավունքների, կրոնի կամ համոզմունքի ազատություն, ՔՀԿ-ների մենեջմենթ, ՔՀԿ-ների համակարգերի մասին, Հայաստանում դատաիրավական բարեփոխումներ և այլն: Դասախոսությունների տևողությունը պետք է լինի 30-40 րոպե, հարց/պատասխաններին տրվում է 20-30 րոպե:
- Կազմել ԵՀՀ newsletter, որը կտարածվի 15-20 օրը մեկ: Այն կներառի մեր կարևոր արտադրանքից երկու-երեք կտոր:

- Կազմակերպել ՖԲ-ում հարցում, թե մարդկանց ինչն է հետաքրքրում այս օրերին:
- Կազմակերպել ԵՀՀ ՀՄ համար առցանց դասընթաց կայքի ՀՄ մասը թարմացնելու համար:
- Տարածել մի նյութեր, որի միջոցով կտեղեկացնենք կորոնավիրուսի պատճառով հայտարարված տարբեր դրամաշնորհային հնարավորությունների մասին:

Քննարկման հիմնական կետերը եվ առաջարկները

Հնարավոր ձևաչափեր և գործողություններ կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակում աշխատելու ընթացքում.

- Առցանց դասախոսություններ FB live-ի կամ zoom-ի միջոցով: Zoom-ը հնարավորություն է տալիս նաև իր պլատֆորմից live մտնել Facebook:
- Դասախոսությունները կարող են լինել տարբեր թեմաներով, օրինակ՝ քննադատական մտածողության, մեդիա գրագիտության, մարդու իրավունքների, հաղորդակցության մասին: Դասախոսությունները կվարեն ծրագրային թիմերից ընտրված մարդիկ, ովքեր լայվ կմտնեն FB իրենց հեռախոսով: Հնարավոր է նաև կազմակերպել քննարկում երկու տարբեր մարդկանց կամ մի քանի մարդու հետ zoom-ի միջոցով և ուղիղ հեռարձակել ֆեյսբուքում:
- Պատրաստել փոքր հարցումներ ՖԲ-ում, հասկանալու համար, թե մարդկանց ինչ է հետաքրքրում այս շրջանում:

EPF Gazette

- Խոսել Տիգրանի հետ, հասկանալ, եթե հնարավոր է հկդեպո կայքում ավելացնել զարկերակի նման մի լենտա home page-ում լավ երևացող տեղում, որտեղ անընդհատ նորությունները կփոփոխվեն ու կավելանան.
- ԵՀՀ կայքում News բաժնում դնել ամենօրյա մեր հրապարակումները, որոնք արվում են ՖԲ-ում: Ամեն օր թարմացնել կայքի պտտվող նորությունները.
- ԵՀՀ newsletter (mailchimp) երկու-երեք շաբաթվա կտրվածքով սարքել, որի միջոցով կտարածենք մեր հիմնական նյութերի ընտրանին.

Այլ

- Տարածել newsletter
 - կորոնավիրուսային այս շրջանում և նաև դրանից բխող տարբեր դրամաշնորհային հնարավորություններով (օրինակ՝ BST), այլ կերպ ասած coronagrants
 - հետաքրքիր հետազոտություններով
 - հետաքրքիր նորություններով
- տարածել մեր ՖԲ-ով տարբեր կրթական օնլայն հնարավորություններ, որոնք հատկապես անվճար են դարձել այս օրերին, edu in times of corona.
- ինքնամեկուսացման խորհուրդներ կամ հետաքրքիր պատմություններ/մենախոսություններ: Մա պատկերացնում ենք պողկաստի տեսքով, եթե երկար է կամ տեսաուղերձի տեսքով, եթե կարճ է: Դա կարող են անել և՛ ԵՀՀ աշխատակիցները, և՛ մեր գործընկերներն ու դրամաշնորհառուները: Օրինակ, մեր մեդիա ծրագրի դրամաշնորհառուները կարող են պատմել իրենց աշխատանքից, թե ինչպես են լրագրողներն այս օրերին աշխատում ու իրենց ուղերձը հղեն մարդկանց կամ խորհուրդներ տան ինքնամեկուսացումն արդյունավետ կազմակերպելու համար.
- կոմունիկացիոն թեմայով քննարկումներ/դասախոսություններ ինֆոտների համար.
- ինֆոտների խնդրել, որ մեզ թեզ անեն այն փոստերում, որոնք վերաբերվում են նաև օնլայն դասընթացներ կազմակերպելուն, այդպես մենք էլ կկարողանանք տարածել և տեղեկացնել երիտասարդներին այդ հնարավորությունների մասին:
- ինֆոտների հաջողության պատմություններ.
- կազմակերպել ԵՀՀ հյուսիսի համար ԵՀՀ կայքի վարման դասընթաց:

Օնլայն հարթակների ինտերակտիվության բաձրացման խնդրի շուրջ

Օնլայն բազմամարդ միջոցառումների ընթացքում ի հայտ եկած հիմնական խնդիրներից մեկը խոսողի և լսողի միջև ինտերակտիվ կապի ոչ բավարար աստիճանն է: Եթե հաղորդակցության մասնակիցների թիվը մեծ չէ և վիդեոհաղորդակցության

հնարավորություն կա, այդ դեպքում հաղորդակցությունը քիչ թե շատ ինտերակտիվ է, բայց այն դեպքերում, երբ հաղորդակցությունը ավելի լայն լսարան է ներառում առաջանում են խզման հետ կապված խնդիրներ, և խոսողը հաճախ չտեսնելով լսողին չի կարողանում զգալ լսարանը:


Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հարստացնել կոլեկտիվ օնլայն հաղորդակցության իտերակտիվ գործիքակազմը: Այս առումով հետաքրքիր կարող է լինել կազմակերպագործունեական խաղերի մեթոդաբանությունը, որի հիմնական իմաստը կոլեկտիվ մտագործունեական էկրանի ստեղծումն է, ինչի արդյունքում հաղորդակցության բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն մասնակցելու հաղորդակցությանը և արձանագրելու մտքերը բոլորի համար տեսանելի և հասկանալի եղանակով:

Առաջարկվող լուծումը կարող է հեշտացնել օնլայն հաղորդակցությունը և օգտագործվել տարբեր նպատակներով՝ կրթական, կոլեկտիվ մտազրոհների, պլանավորման հանդիպումների և այլն:

Առաջարկի հիմքում հաղորդակցության ինտերֆեյսի ձևավոխումն ու հավելյալ գործիքների ներդրումն է: Կենտրոնում կոլեկտիվ հաղորդակցական էկրանն է, որի շուրջ անհատական էկրաններն են երկու որակով՝ տեսանելի և անտեսանելի: Անտեսանելի էկրանը յուրաքանչյուր հաղորդակցվողի անձնական տարածքն է տարբեր եղանակներով սևագիր նշումներ անելու համար, տեսանելի հատվածը՝ անհատական հաղորդակցության տիրույթն է, որում հաղորդակցության մասնակիցը կարողանում է անել «լուսանցքային» նշումներ, որոնք տեսանելի են բոլորի համար, սակայն կոլեկտիվ էկրանի մաս չեն հանդիսանում և չեն շեղում խոսողին և մյուս մասնակիցներին: Կոլեկտիվ էկրանը՝ բոլորի ինտերակտիվ հաղորդակցության արդյունքում ստեղծվող պատկերն է: Հարկ է նշել, որ լուսանցքայինի միջոցով խոսողը հնարավորություն է ստանում հետևել լսողների արձագանքներին, իսկ լսողները կարողանում են առանց ընդհատելու խոսողին արձանագրել իրենց արձագանքները: Օնլայն տիրույթն այդ առումով լայն գործիքակազմ ունի՝ տեքստ, պատկեր, ձայնային և վիդեոհաղորդագրություն, ինչպես նաև էմոջի, կամ այլ կարճ և օնլայն աշխարհում տարածված խորհրդանիշների, օրինակ գիֆերի տեսքով:

Նկարագրված ինտերֆեյսը կառուցվածքային առումով ունի մոտավորապես ստորև ներկայացված տեսքը՝

- Օգտատիրոջ գործիքակազմ՝**
- Տեքստ
 - Չայնային հաղորդագրություն, ձայնագրություն
 - Վիդեո հաղորդագրություն, ձայնագրություն
 - Գծագիր/պատկեր
 - Էմոջի
 - Գիֆ
 - Այլ



Suggestions of EPF “futuristic group”, April 3, 2020

Taking into account the situation connected with Covid-19 pandemic, EPF formed a “futuristic group”, which addressed various issues on further management of EPF activities through implying the methods of brainstorming, analysis of materials and thematic discussions. Below you can find the thematic directions that had been discussed:

The “futuristic group” discussed the future of the civil society and brought up various issues within two contexts:

- 1) *rethinking the effectiveness of activities and tools* - issues connected communication at a physical distance reflecting in changes of self-articulation, the need to make research on new issues, the potential of various fields and areas to be monetized, conceptual rethinking of e-learning tools and implying new tools and methods, emergence of new psychological issues in self-isolation, changes in economy, etc.
- 2) *collaboration between the civil society and the state* - improve communication between actors of civil society and the state by using online tools, raise awareness on the online services provided by the beneficiaries and help develop new online services, fields that suffered the Covid-19 pandemic and lacked public attention, etc.

Below is the full version of the document in Armenian.

ԵՀՀ Ֆուտուրիստական խմբի առաջարկները Ապրիլի 3, 2020 թ.

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ԵՀՀ-ն կազմավորել է ֆուտուրիստական (ֆուտուրոլոգիական) խումբ, որը մտազրոհների, նյութերի վերլուծության և քննարկումների միջոցով հասցեագրում է սոցիալական գիտությունների ամենադժվար հարցը՝ ապագայի գործընթացները պատկերացնելը:

Այսօր ձեզ ենք ներկայացնում խմբի առաջին մտազրոհի արդյունքները: Հաջորդ արդյունքները կամ միջոցառումները կիրառարակվեն իրենց ժամանակին:

Գործունեությունների ու գործիքների արդյունավետության վերաբերմաստավորում

- Կարանտինի երկար տևելը կնպաստի մարդկանց վարքի, առաջնահերթությունների, հաղորդակցության ու համակեցության կանոնների փոփոխությանը: Ֆիզիկական հաղորդակցության նվազեցումը կփոխի հեռահաղորդակցական մշակույթը ու կազդի մարդկանց ինքնարտահայտման վրա:
- Ստեղծված իրավիճակում ակնհայտ կլինի գործունեության տարբեր տեսակների օնլայնացումը, որպեսզի մարդիկ կարողանան կոմպենսացնել օֆլայն տիրույթում դրանց բացակայությունը: Ընդ որում խոսքը ոչ միայն մարդկանց պրոֆեսիոնալ գործունեության, այլև ժամանցի օնլայնացման մասին է: Սա տրամաբանորեն կհանգեցնի մասնագիտական և գործունեական առաջնահերթությունների վերանայմանը, քանի որ նախկինում ակտուալ ու հնարավոր գործողությունները կփոխարինվեն նորերով: Առաջնահերթությունների վերադասավորումը կբխի կյանքի ընթացքի փոփոխությունից, օրինակ՝ համակարգչի մոտ երկար անշարժ նստելը, տեսողության լարումը, համաճարակները կակտուալացնեն վարակաբանությունը, ակնաբուժությունը, դիետոլոգիան և այլ մասնագիտություններ: Այլ օրինակ է այն, որ ֆիզիկական շփման հնարավորությունների սահմանափակումը կհանգեցնի օնլայն դիագնոստիկ գործիքների մշակման և ներդրման անհրաժեշտությանը: Դրսում և կոլեկտիվ սպորտաձևերով զբաղվելու սահմանափակումները կհանգեցնեն տանը ինդիվիդուալ սպորտաձևերի զարգացմանը, բնականաբար SS ոլորտը կստանա զարգացման հավելյալ խթան և այլն: Փոխարենը մասնագիտություններ կամ զբաղմունքի ձևեր, որոնք ենթադրում են մեծ մասսայականություն, ակտիվ տեղաշարժ և այլն կկորցնեն իրենց ակտուալությունը:
- «Մեծ ռեֆլեքսիան»՝ կյանքը, գործունեությունը, հետագա զարգացման հեռանկարները հասկանալու ու վերաիմաստավորելու անհրաժեշտությունը, կառաջացնի լայնածավալ ու համապարփակ հետազոտությունների անհրաժեշտություն, բայց պետք է հաշվի առնել նաև, որ կյանքի նոր ընթացքը կազդի նաև հետազոտական մեթոդների և գործիքների վրա, նույն «բիզ դատա» ասվածքը ու դրա հետ աշխատանքը հավելյալ կարևորություն կստանա, այսինքն՝ դրա հետ աշխատելու մեթոդների զարգացման անհրաժեշտություն ևս կառաջանա: Առհասարակ տվյալների հասանելիության և դրանց հետ աշխատանքի սկզբունքները ևս վերաիմաստավորման կարիք կունենան, քանի որ ակնհայտորեն նոր իրավիճակում տվյալը որպես ռեսուրս հավելյալ արժեք է ստանում:
- Էլեկտրոնային կրթությունը այս ընթացքում ակտիվ աշխատում է, սակայն դա նույն օֆլայն կրթության օնլայն տարբերակն է: Թերությունները շատ են, անհրաժեշտ է օնլայն կրթության կոնցեպտուալ վերանայում: Կրթության ոլորտում նոր գործիքներ և մեթոդներ ներդնելը թերևս կարևորագույն առաջնահերթություններից մեկն է, որովհետև արդեն իսկ ակնհայտ է, որ օնլայն կրթական հարթակները և մոտեցումները, որոնք գոյություն ունեն այսօր, ձևավորվել են հիմնականում որպես օֆլայն կրթության հավելում և ոչ որպես ավտոնոմ կրթական համակարգ: Այս համատեքստում կրթության սկզբունքի վերանայումը դառնում է առաջնահերթություն, կրթական միջավայրի փոփոխությունը անխուսափելիորեն բերելու է կրթության ընթացքի և բովանդակության փոփոխության: Այս համատեքստում պետք է նախ և առաջ խոսել անհատական կրթական հետազոծերի, ընտանիքը և տունը որպես կրթական նոր միջավայր

պատկերացնելու, կրթական նյութերը սկզբունքորեն վերանայելու և նախագծային կրթությունը, որպես կրթական գործընթացի հիմնական մեթոդ դարձնելու մասին:

- Հոգեբանական խնդիրներ կառաջանան, միգրացե հոգեբանների դերը ևս արժևորվի կարանտինի շրջանում: Առհասարակ մարդու ներաշխարհում տեղի ունեցող փոփոխությունները ուսումնասիրելու կարիք կա, ինչն առաջին հերթին պայմանավորված է սոցիալական միջավայրի կտրուկ փոփոխության հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդիկ ավելի շատ ժամանակ են անց կացնելու ընտանիքում, հավանաբար ընտանեկան հոգեբանությունը ևս վերախմաստավորման կարիք ունենա:
- Արժեքների վերախմաստավորում, օրինակ, 50-ն անց միայնակ անձանց օգնելը դարձել է կարևոր արժեք, մարդը, նրա առողջությունը համարվում է գերագույն արժեք: Նոր իրավիճակում սոլիդարությունը, փոխօգնությունը, իրար մասին հոգալը նոր իմաստ ու լիցք են ստանում, և դա նույնպես ուսումնասիրման և ճիշտ կիրառման կարիք ունի:
- Ամենից շատ տուժող ոլորտներից մեկը կլինի կատարողական արվեստը՝ թատրոններ, համերգներ, որոնք կունենան հավելյալ աջակցության կարիք: Այս տեսանկյունից ստեղծագործական հետաքրքիր հնարավորություններ են բացվում արվեստի օնլայնացման և դրա մոնետիզացման գործիքների ստեղծման ասպարեզում: Օրինակ, ստեղծել օնլայն համերգասրահներ, թատրոններ և այլն, որոնցից օգտվելու համար այցելուն էլեկտրոնային տոմս պետք է գնի, որպեսզի կատարողները եկամուտ ունենան:
- Չմոռանանք, սակայն, որ կան ոլորտներ, որոնք տուժած էին հենց նախկին իրավիճակում, օրինակ՝ գեղարվեստական գրականության ընթերցանությունը: Պետք կլինի մտածել, ինչպես գոնե այսպիսի ոլորտները, որոնք, թվում է, այժմ հնարավորություն ունեն վերակենդանանալու, կարող են դառնալ ավելի մոնետիզացվող:
- Կփոխվի տնտեսության կառուցվածքը, մեծ պահանջարկ վայելող ապրանքների և ծառայությունների հիերարխիան կփոխվի: Այստեղ ևս հետազոտական մեծ աշխատանքի կարիք կա:

Քաղաքացիական հասարակության՝ պետության հետ աշխատանքը

- Բարելավել պետություն-հասարակություն կոմունիկացիան բոլոր ուղղություններով: Ստեղծել (կամ օգտագործել եղած) առցանց հարթակներ, որտեղ հասցեագրվեն խնդիրները, խզումները և այլն:
- Քաղաքացիական հասարակությունը կարող է պետությանն օգնել մի շարք ասպարեզներում իր գործունեությունը բարենորոգելու հարցում, օրինակ, գնումների քաղաքականության փոփոխման սկզբունքների, ներառյալ տենդերները, դրամաշնորհները, որ դրանք դառնան ավելի վստահելի, թափանցիկ, արդար:
- Երկուսը պիտի միմյանց հնարավորինս արագ իրազեկեն իրենց կողմից կամ այլ շահառուների կողմից ստեղծվող օնլայն ծառայությունների մասին: Նաև օգնել նոր օնլայն ծառայություններ մշակել ու ներդնել:

- Պետությունը տրամադրում է ինֆորմացիա, սակայն ոչ միշտ է այն լիարժեք: Քաղաքացիական հասարակությունը պիտի լինի հետևողական, պահանջի, որ պատշաճ իրազեկեն: Մյուս կողմից, կարող է խորհուրդ տալ, ինչպես ամրապնդել իրազեկումը: Օրինակ, հենց կորոնավիրուսի հարցում մարդիկ չունեն պատասխաններ բազում հարցերի, ներառյալ արդյո՞ք մեկ հատիկ վիրուսից կարող է մարդ վարակվել, թե՞ մոտավորապես քանի վիրուս պիտի լինի: Մարդիկ չգիտեն, եթե հայտնեն, որ կասկածում են հիվանդություն, ինչ է կատարվելու հետո. ով է ժամանելու, ինչպես են իրենց հետ վարվելու, արդյոք տունը հականեխելու դեպքում իրերը չեն փչանա, և այլն:
- Քանի որ հանրության և պետական մարմինների ուշադրությունը վիրուսի կանխմանն է ուղղված, տուժում են մի շարք ոլորտներ, դուրս մնալով քաղ. հասարակության ուշադրությունից: Օրինակ, Ընտրական օրենսգրքին առանց քննարկումների հաստատվել է, կամ՝ հանքարդյունաբերությունը շարունակվում է: Նոր advocacy գործիքների ստեղծման անհրաժեշտություն է առաջանում: Անհրաժեշտ է, որպեսզի քաղ. հասարակությունը համախմբվի, տեղյակ պահվի նախապես սպասվող փոփոխությունների մասին, նրա կարծիքը հաշվի առնվի:
- Քաղ. հասարակությունը պիտի սովորի օնլայն նույնպես արդյունավետ աշխատել, ինչպես օֆլայն:
- Աջակցել պետությանը՝ կանխելու որոշ խմբերի կողմից լարված դրության օգտագործումը՝ ի շահ սեփական կարիքների:

ՎԵՐՋ

EPF's support to the society and civil society organizations, April 11, 2020

EPF continues to support civil society organizations (CSOs), inform about new opportunities, grant programs, useful online resources and consulting opportunities in times of Covid-19 pandemic.

As a continuation of the suggestions made by the “futuristic group”, EPF has generated the following ideas:

- to schedule online meetings, if necessary;
- to update the action plans of the project in response to the Covid-19 pandemic;
- to support civil society organizations, as well as inform about new opportunities and resources;
- to aid in developing critical thinking and media literacy skills;
- to raise the awareness of human rights among the general public; etc.

Below is the full version of the document in Armenian.

Աջակցություն հասարակությանը և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին Ապրիլի 11, 2020 թ.

Որպես շարունակություն ԵՀՀ ֆուտուրիստական (ֆուտուրոլոգիական) խմբի առաջարկների ([այստեղ](#)), մեր քննարկումները հանգեցրեցին հետևյալ գաղափարներին:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ԵՀՀ-ն վերանախագծում է ընթացիկ ծրագրերի գործողությունները. ինչը որ հնարավոր է անել առցանց, արվելու է առցանց: Միևնույն ժամանակ, ԵՀՀ-ն նաև ձեռնարկում է հետևյալ գործողությունները. վերանայում է ընթացիկ ծրագրերն այն տեսակետից, արդյոք նրանց մեջ սկզբունքային փոփոխություններ պիտի արվեն կորոնավիրուսի համաճարակի հետ կապված. և արդյոք որոշ ռեսուրսներ կարող են ուղղվել համաճարակի դեմ պայքարին, և ինչպիսի գործողություններ կարող է ԵՀՀ-ն ձեռնարկել այդ ուղղությամբ:

ԵՀՀ-ն շարունակում է **աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ)**, տեղեկացնել նոր հնարավորությունների, դրամաշնորհային ծրագրերի և համաճարակի պայմաններում օգտակար համացանցային ռեսուրսների ու խորհրդատվության հնարավորությունների մասին:

ԵՀՀ-ն խորհրդատվություններ է կազմակերպում մի շարք խնդիրների և հնարավորությունների վերաբերյալ: ՔՀԿ-ները կարող են դիմել խորհրդատվության:

Ներկայիս պայմաններում կարևոր է հասարակությանը տրամադրել **քննադատական մտածողության և մեղիա գրազիտության** հավելյալ հմտություններ: ԵՀՀ-ն երկար տարիներ իր գործընկերների հետ զբաղվում է դրանով, և այժմ շարունակելու է զբաղվել և առցանց միջոցներով տրամադրել ինչպես նոր, այնպես էլ արդեն աշխատասիրված ռեսուրսներ:

Այս օրերին հասարակության համար կարևոր է համերաշխության դրսևորումը և հասարակության լայն շերտերի փոխօգնությունը: Այդ առումով, ԵՀՀ-ն կարևորում է հասարակության շրջանում **մարդու իրավունքների վերաբերյալ** իրազեկվածությունը: Մենք տարիներ շարունակ զբաղվում ենք դրանով և այժմ էլ շարունակելու ենք սա համարել առաջնահերթություն: Հաշվի առնելով, որ արտակարգ իրադրության պայմաններում մարդու իրավունքների որոշակի սահմանափակումներ կան, կարևոր է, որպեսզի դրանք լինեն ժամանակավոր, թույլ չտրվեն օրենքի չարաշահումներ, լինեն համաչափ, անհրաժեշտ և հիմնավորված: Քաղաքացիները պիտի գիտակցորեն ընդունեն դրանց կարիքը, հասկանան այդ քայլերի նպատակը: Դա նշանակում է աշխատանք ինչպես կառավարության, այնպես էլ հասարակության հետ:

ԵՀՀ-ն պատրաստ է խորհրդատվություն տրամադրել նաև հետևյալ թեմաներով.

- ՀԿ-ների հաշվետվությունների նոր կարգի վերաբերյալ
- Ընթացիկ ծրագրերի վերապլանավորման վերաբերյալ
- «Ինչպես աշխատել հեռահար» թեմայով
- Ինչպես պլանավորել կազմակերպության ապագան

Որպես քաղաքացիական հասարակության սեկտորի աշխատակիցների կուլեկտիվ, ԵՀՀ-ն նաև իր շահառուներին տեղեկացնում է աջակցության անհատական գործողությունների հնարավորությունների վերաբերյալ.

- Հնարավորության դեպքում իրականացնել նվիրատվություն COVID19- ի տարածման դեմ պայքարի համար հետևյալ հղումով՝ <https://www.e-payments.am/am/state-dements/step3/service=5054>
- Խթանել սոցիալական հեռավորության պահպանման օրակարգը՝ բացատրական աշխատանք տանելով մերձավորների շրջանում և խախտումներ նկատելու դեպքում պատասխանատու մարմիններին տեղեկացնելու միջոցով

- Բացատրական աշխատանք տանել մերձավորների շրջանում կեղծ նորությունները և դավադրության տեսությունները տարբերակելու ուղղությամբ, օգտագործելով ԵՀՀ կամ այլ առցանց նյութեր կամ սեփական մոտեցումները
- Հրապարակայնորեն ներկայացնել պետական պաշտոնատար մարմինների հետ մեր հաղորդակցության ընթացքը և կիսվել սեփական փորձով. օրինակ, եթե այս ընթացքում զանգահարել եք թեժ գիծ COVID19-ի վերաբերյալ հարցեր ճշգրտելու համար, կիսվել փորձով մյուսների հետ և ներկայացնել քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև՝ բարելավման ոլորտները
- Կիսվել համաճարակին վերաբերվող հրատապ և կարևոր, ստուգված հաղորդագրություններով
- Հոգեբանական օգնություն ցուցաբերել նրանց, ով կարող է նման կարիք ունենալ
- Հնարավորության դեպքում՝ մասնակցել կամավորական գործունեության հավաստի և համակարգված տեսակներին

Այսպիսի գործողությունները համերաշխության և փոխօգնության ցուցիչներ են, որոնք թույլ կտան մեր հասարակությանը համեմատաբար անկորուստ հաղթահարել համաճարակը և հող են նախապատրաստում ետհամաճարակային կյանքի մի շարք հատկանիշների վերաձևակերպման համար:

Հետադարձ կապ. info-epf@epfound.am:

Clarification of EPF rules on remote (electronic) written communication, May 5, 2020

In regard to the overloaded remote work in times of Covid-19 pandemic, rules of written communication has become more rigid. They concern the following directions:

- e-mail communication (in-office communication);
- using Facebook Messenger at the office;
- cases, when other people are involved.

Below is the full version of the document in Armenian.

ԵՀՀ հեռահար (էլեկտրոնային) գրավոր կոմունիկացիայի կանոնների ճշտում Մայիսի 5, 2020 թ.

Այս կանոնները պայմանավորված են նրանով, որ հեռակա աշխատանքի պայմաններում մենք շատ ենք ստանում իմակներ, այլ հաղորդագրություններ, և շատ ենք հատված համակարգչին, ինչն օգտավետ չէ և ավելացնում է սթրեսը, ազդում արտադրողականության վրա: Հաշվի առնելով իրադրության տևականությունը, գրավոր հաղորդակցության կանոնները խստանում են:

1) Իմակներ (իմեյլներ)

Ներգրասենյակային կոմունիկացիա

Իմակները ԵՀՀ աշխատանքային գրավոր կոմունիկացիայի հիմնական պաշտոնական միջոցն են: Դա նշանակում է, որ գրավոր հաղորդակցության ոչ մի այլ կերպ (ՖՔ սուրհանդակ, սկայպում կամ զումում գրված մեկնաբանություն, սմս և այլն) չի

համարվում պաշտոնական, ուրեմն՝ չի կարող պարտադիր հիմք լինել որևէ գործողության համար, կապված ԵՀՀ անելիքների հետ:

Իմակաների օգտագործման վերաբերյալ սահմանվում (կամ ամրապնդվում են) հետևյալ կանոնները.

ա) ամենօրյա կոմունիկացիայի ժամանակ գրելը/պատասխանը մեկ անձին ազատ ռեժիմով է տեղի ունենում:

բ) հաշվի առնելով իմակաների առատությունը, լինի մեկ անձին թե շատ, գերադասելի է վերնագրի տուփիկում (սաբջրկտ լայն) նշել, թե ում է հասցեագրված:

գ) Բազմակի անձերի իմակ ուղարկելը պայմանավորված է նրանով, որ նրանք պիտի ի գիտություն ընդունեն իմակը:

դ) Եթե իմակը չի գալիս տվյալ անձի ղեկավարից և հասցեագրված չէ տվյալ անձին վերնագրի տուփիկում, անձը պարտավոր չէ կարդալ իմակը: Եթե գալիս է ղեկավարից և հասցեագրված է խմբի, ոչ թե անձ(եր)ի (վերնագրի տուփիկում անձ (եր) չեն նշված), խմբի ղեկավարն է պարտավոր կարդալ իմակը, եթե պետք է՝ հանձնարարել աշխատակցին դրանով զբաղվել (առանց ողջ խմբին պատասխանելու): Սակայն դա նշանակում է, որ չկարդացողը կամավոր կերպով համաձայնել է այն գործողությանը, որը կարող է հաջորդել տվյալ իմակին, այլ կերպ ասած՝ տեսականորեն տեղեկացված է:

ե) խմբային իմակի պատասխանը. այն պիտի ճշտի վերնագրի տուփիկում հասցեագրումը և արդյոք խմբում բոլորը պիտի ստանան այս պատասխանը: Հատկապես արգելվում է բոլորին գրել, եթե մեկին ասում ես «շնորհակալություն» կամ «հասկացա»: Մյուս բոլոր դեպքերում գերադասելի է. 1) ամեն պատասխանից առաջ փոխել/հստակեցնել վերնագրի տուփիկում ասվածը, որ գլխավոր հասցեատիրոջն ուղղված լինի և վերնագիրը (վերա) համապատասխանեցվի ներսի բովանդակությանը. 2) եթե շղթան շատ է երկարել և կան նաև կցած փաստաթղթեր, կրճատել նախորդ իմակաների շղթան ուղարկելուց առաջ:

զ) աշխատանքային պաշտոնական ժամերն են 09.00-10.00-ից մինչև 17.00-18.00: Դրանցից հետո ուղարկված իմականերին պարտավորություն չկա պատասխանել մինչև հաջորդ առավոտ: Նույն կերպ՝ տոն օրերին և շաբաթ-կիրակի ուղարկված իմականերին պարտավորություն չկա պատասխանել: Սա վերաբերվում է նույնիսկ անձամբ վերնագրված իմականերին: Ուղարկողն իրավունք ունի ուղարկել, երբ ուզում է, սակայն պատասխանելու պարտավորություն չկա, բացառությամբ շտապ դեպքերից, որի դեպքում արժի տուփիկում գրել «Գևորգ. շտապ» կամ նման կերպ, կամ իմաց տալ հեռախոսազանգով:

է) գործին չառնչվող իմականերն ուղարկելն ազատ է, սակայն տուփիկում նշելով՝ «գործից դուրս» (կամ նման կերպ): Դրանց պատասխանելն ազատ է, սակայն տուփիկում նշելով՝ «անպարտադիր պատասխան» (կամ նման կերպ): Սա վերաբերվում է նաև սրամիտ իմականերին:

ը) կա իմակաների մի կատեգորիա, որը գործին մասամբ է առնչվում, ինչպես, օրինակ, ԴՏ վերտառությամբ իմակաները, որ հավաքվելու համար են, հետագայում օգտագործվելու (և ցանկության դեպքում՝ ծանոթանալու): Սրանց հանդեպ գործում է նույն կանոնը, ինչ գործնականների: Եթե նախապես պայմանավորված վերտառություն չկա, լավ է տուփիկում նշել, որ շտապ չէ:

թ) ուշադրություն դարձրեք, որ եթե աշխատանքային ժամից դուրս որևէ ոչ շտապ իմակի պատասխանեցիք, նախնական ուղարկողը կամ այլ անձինք կարող է ստիպված կարդան: Դրա համար չի խրախուսվում դա անել, իսկ եթե անում եք, նշեք, ում է հասցեագրված և աշխատեք խմբի չուղարկել, այլ միայն անձի: Կարելի է պատասխանը նախօրոք գրել-պատրաստել, սակայն ուղարկել ըստ սույն կանոնակարգի:

Կանոնների էությունն է՝ համեմատաբար ազատ թողնել իմակ ուղարկողին, սակայն պատասխանատվություն դնել պատասխանողի վրա նախ և առաջ: Մտածեք բազում անգամներ, մինչև պատասխանն անփոփոխ տուփիկով և նույն խմբին ուղարկելը, ում որ նախնական իմակն էր հասցեագրված: Եթե պատասխան է եկել կոլեկտիվ իմակին՝ մի՛ շտապեք նույնպես արագորեն պատասխանել, ընկնելով կոլեկտիվ մակընթացության մեջ:

Միննույն ժամանակ, ուղարկողն էլ պիտի հաշվի առնի այս կանոնները:

2) ՖԲ սուրհանդակի օգտագործումը գրասենյակի կողմից

ՖԲ սուրհանդակի օգտագործումը որոշ իմաստներով է՛լ ավելի խնդրահարույց է, քան իմակաների քանակը, քանի որ այստեղ հաղորդագրությունները պահանջկոտ կերպով երևում են կամ նույնիսկ լավում: Այդ իսկ պատճառով ՖԲ սուրհանդակի վերաբերյալ սահմանվում են հետևյալ կանոնները.

ա) ՖԲ սուրհանդակով անձերի միջև հաղորդակցությունը մնում է ազատ: Գործնական (կամ ոչ) հաղորդակցության դեպքում տեքստը պիտի ուղարկվի ոչ թե որևէ խմբի, այլ միայն տվյալ անձին:

բ) ՖԲ սուրհանդակով պաշտոնական՝ ԵՀՀ գրասենյակի գործերին վերաբերվող հաղորդակցումը խստորեն սահմանափակվում է (տե՛ս ստորև):

զ) ԵՀՀ անձերի միջև (և ընդհանրապես ԵՀՀ) պաշտոնական գրավոր հաղորդակցության հիմնական պաշտոնական միջոցն իմական է, ոչ թե մեկ այլ միջոց: Բոլորին, ով փորձում է ՖԲ սուրհանդակով գրավոր (տեքստային) բիզնես խոսակցություն սկսել ԵՀՀ աշխատակցի հետ, հորդորեք, որ գրեն իմականով: Հեռախոսազանգը կամ տեսազանգը՝ ուրիշ:

դ) ՖԲ սուրհանդակով ԵՀՀ-ին կամ ծրագրային խմբին կարելի է գրել հաղորդագրություն (ուղարկել հղում) միայն բացառիկ դեպքերում. եթե հաղորդագրությունը շտապ է և հույժ կարևոր:

ե) արգելվում է ՖԲ սուրհանդակով խմբային հաղորդագրություններ ուղարկել (բացի շտապից և կարևորից՝ արտակարգ իրադրությունների առնչվող) ժամը 20.00-08.00 շրջանում, տոն օրերին, հանգստյան օրերին: ԵՀՀ ՖԲ խմբերը մնում են զուտ արտակարգ դեպքերի օգտագործման համար կամ ՖԲ խորհրդակցություններ կազմակերպելու (ձայնային-տեսողական):

զ) ԵՀՀ աշխատակիցների երկուսից ավելի խումբ ՖԲ սուրհանդակում ԵՀՀ գործունեության նպատակներով կարող է կազմվել միայն եթե խմբի բոլոր անդամները բացահայտ համաձայնություն են տվել: Այդ խմբին չպիտի միավորվեն հավելյալ մարդիկ: Այդ խմբի հաղորդակցությունը չի համարվում ԵՀՀ պաշտոնական հաղորդակցություն, քանի որ պաշտոնական է միայն իմականերով հաղորդակցությունը:

3) Դեպքեր, երբ այլ անձինք են ընդգրկված

ա) եթե իմակ խմբում ընդգրկված են այլ անձինք, կամ գլխավոր հասցեատերը գրասենյակից դուրս անձ է, վերը նշված կանոնները պահպանվում են, սակայն պաշտոնական անձանց դեպքում գուցե իմակաների շղթաները չկրճատվեն: Նույնիսկ պաշտոնական անձանց դեպքում խրախուսելի է վերնագրի տուփիկում (թեկուզ փոքրիկ) փոփոխություն կատարել պատասխան ուղարկելուց առաջ, մանավանդ եթե պատասխանն արդեն այլ թեմայով է, քան նախնական հաղորդակցությունն էր:

բ) ՖԲ սուրհանդակով ԵՀՀ խմբերին գումարած դրսի անձ (եր) հաղորդակցական համակարգ ունենալու դեպքում, այդ հաղորդակցությունը տեղափոխվում է իմակաների դաշտ, այդ խմբերը փակվում են կամ նրանցում մնում են միայն այն մարդիկ, որոնք համաձայն են այդ հաղորդագրությունները ստանալ անընդհատ: Օրինակ. «Խնդրում եմ ինձ դուրս գրել այն խմբից, որտեղ Սոնա Բալասանյանի հետ միգրացիան եք հետազոտում, և տեղափոխել այդ խումբը (կամ առանց խումբ ստեղծելու՝ իմակաների փոխանակումը) իմակաների դաշտ»:

Շնորհակալություն

EPF Armenia's Going Concern Assessment In response to COVID-19 pandemic

January-December 2020

As of June 5th, 2020

1. The need for going concern assessment

The first case of COVID-19 infection in Armenia was registered on March 1, 2020. By March 13, the number of infected increased. On March 16, the Government of the Republic of Armenia (RA) declared countrywide state of emergency for one month, which was renewed on April 12 for another month, and then in mid-May was again renewed for a month.

Since the beginning of COVID-19 outbreak, EPF Armenia (hereinafter, EPF) was closely following the Armenian Government orders re: fighting the pandemic. EPF has introduced a number of administrative measures and working procedures to adjust its mode of operation and ensure staff's effective work from distance. EPF and primarily its Senior Management Team have held various discussions around the necessary steps in order to mitigate the administrative, human resource, financial and programmatic sustainability risks during the outbreak of COVID-19 pandemic in Armenia and globally.

EPF has taken precautionary steps even before the decision on the state of emergency, and has shifted to online/remote working mode since March 15, which was [communicated](#) with the public, as well as EPF's donors and other stakeholders. EPF staff members also received written notifications from the CEO on the necessary rules and safety measures that each individual must observe while in the lockdown. These rules included restrictions on contacting people and participating in public events/meetings, informing EPF about urgent meetings that cannot be postponed, and then observing two weeks' quarantine before meeting with other staff members. On March 24, the CEO further strengthened these restrictions following the new anti-epidemiological restrictions imposed by the RA Government.

Following the announcement of the state of emergency in Armenia, EPF formed four working groups that would work on four scenarios: futuristic, assistance to the society, assistance to the civil society and CSOs and communications during pandemic. EPF also embarked on drafting relevant revisions to policies and procedures. The results of the analytical work by the four working groups were combined and presented to the public in two announcements: [one](#) presenting EPF's reflections and approaches on future programming and societal developments, and [the other one](#) on the assistance EPF and its staff members individually can provide to the society and CSOs during COVID-19. These documents mainly focused on the need to increase the knowledge of critical thinking and media literacy, human rights related violations; advice to CSOs on how to shift to an online working mode, etc. The other working group worked more on necessary amendments to EPF's Emergency Management Plan and on internal guidelines on how to accommodate the workplace in the post-pandemic period.

2. Expected Financial Impacts of COVID-19 on EPF

In order to have a clearer picture of what will be the financial situation of EPF over the rest of 2020, EPF’s Annual Expenses for salaries and administration for the period of May 1-31 were analyzed.

Since mid-March 2020, i.e. since the announcement of a state of emergency in Armenia, EPF managed to cover all staff salaries without any reductions (for March and April 2020). No reductions are envisioned in the nearest future, as EPF’s financial situation is rather stable, and the calculation below proves the statement.

2.1. 2020 Fiscal Year Budget Analysis

EPF’s 2020 Budget indicates the following figures for staff salaries and administrative expenses. An additional column (**figures highlighted in red**) presents the eight-months apportionment for the period of May 1 – December 31, 2020. These are funds available in the budgets of the ongoing projects.

| 2020 Budget Category | Unit | # Units | Price/ Unit | Total for 12 months | Total for 8 months |
|--|-------|---------|----------------|------------------------|-----------------------|
| Staff salaries | month | 12 | \$ 44,560 | \$ 534,720 | \$356,480 |
| Service contracts and employees other benefit expenses | month | 12 | \$ 15,520 | \$ 186,240 | |
| Office Maintenance | month | 12 | \$ 10,740 | \$ 128,880 | \$85,920 |
| Audit and consulting expenses | pool | 1 | \$ 6,632 | \$ 6,632 | |
| Subtotal: Salaries & Admin. Exp. | | | | \$856,472 | |
| Programmatic Expenses | pool | 1 | \$1,313,502 | \$ 1,313,522 | |
| TOTAL | | | | \$2,169,994 | |

2.2 Donors Coverage of EPF Armenia

Currently, EPF is implementing 15 projects being funded by several donors including US Government (US DRL, USAID- CELOG and MICE, BST), EU (ATNP 3, PeaCE 2), the Netherlands MFA, UK Government, Bulgarian Embassy, UN Structures (OHCHR and IOM) and Stonehill College. The below table demonstrates the apportioned salaries and administrative costs of all the ongoing budgets for 2020, which indicates how much of a secured funding EPF has at this point. Since the DATA project's Cooperative Agreement was signed on June 2, 2020, DATA project was added in the chart below.

| | 2020 Budget | Salaries/Service contracts and employees other benefit expenses | Salaries & Administrative Expenses | Subtotal |
|----|---|--|---|-----------------|
| | Total for 12 months (January - Dec 2020) | | | |
| 1. | USAID DATA | \$137,264 | \$22,720 | \$159,984 |
| 2. | US DRL | \$113,463 | \$30,935 | \$144,398 |
| 3. | PeaCE-2 | \$109,963 | \$15,689 | \$125,652 |
| 4. | USAID CELoG | \$96,511 | \$8,392 | \$104,903 |
| 5. | EC ATNP 3 | \$86,941 | \$30,033 | \$116,974 |
| 6. | Dutch AD/RT | \$56,294 | \$1,823 | \$58,117 |
| 7. | SIDA 2 | \$51,440 | \$10,711 | \$62,151 |
| 8. | USAID MICE | \$30,571 | \$3,840 | \$34,411 |

| | | | | |
|------------------------------|----------------------------|-------------------|-------------------|-------------------|
| 9. | UN OHCHR | \$8,400 | \$2,640 | \$11,040 |
| 10. | BST | \$7,244 | \$3,108 | \$10,352 |
| 11. | UK Arm-Turk Econ. Research | \$6,716 | \$1,264 | \$7,980 |
| 12. | PINK | \$5,730 | \$- | \$5,730 |
| 13. | UN IOM | \$4,840 | \$1,094 | \$5,934 |
| 14. | Bulgarian Embassy | \$4,389 | \$2,457 | \$6,846 |
| 15. | Stonehill College | \$1,200 | \$800 | \$2,000 |
| Total (for 12 months) | | \$ 720,966 | \$ 135,506 | \$ 856,472 |

As it can be observed from the figures above, both the Personnel and Administrative Expenses are fully covered by EPF's secured funding, **so no reduction in staff costs are envisioned for 2020.**

It is important to mention that all the donors agreed to the changed mode of operations from off-line to on-line due to COVID-19 restrictions. therefore, salaries/payments of all EPF staff and contracted-out experts are accepted by these donors. For some of the projects, especially the ones that include sub-granting component, EPF may consider requesting no-cost extension.

In this overall picture, it is worth mentioning the additional funding expected to come from USAID for the cost extension of the CELoG project. One year cost extension will start from September 1, 2020, and EPF's share from this program will be about \$130,000, out of which approximately \$62,654 will go to salaries costs.

2.3 Cash Flow Analysis

In terms of money transfers, different donors have different patterns/practices of transferring money. These patterns are related to EPF's contractual obligations. The European Union and Dutch Government transfer money annually, whereas USG funding comes monthly.

US Government funded projects

For USG funded projects, such as Justice for Reform Project funded by DRL; and MICE and CELoG projects funded by USAID, EPF sends cash request monthly, and gets the money within 2 weeks afterwards.

EPF received the funding from USAID for DATA project on June 2, 2020. Monthly cash requests will be used for this project as well.

EPF never experienced any delay from USG funding neither in normal circumstances nor since COVID-19 pandemic started.

European Union funded projects

For the EU funded projects, the practice is to get an advance payment for the 1st year of project implementation. Regarding the currently implemented projects, EPF received an advance for ATNP-3 project in November 2019, (Euro account money basically represents this funding). For PeaCE-2, EPF has a verbal and email approval from the donor to start the project from April 15, 2020. However, no contract has not been signed yet, and no money is transferred. So, in the calculations above, PeaCE-2 share of the secured funding (\$110,000 salary and \$16,000 for admin costs) will be received later, which however, does not represent a high risk as EPF's unrestricted funds can be used instead to cover the PeaCE related costs until PeaCE-2 money is transferred to EPF account.

EPF's experience of getting EU funding is that the 1st advance payment is never delayed and is paid within 2-3 weeks upon contracts' signing. However, further financing and the final reimbursement of expenses is usually done by EU with huge delays.

The Netherlands Government funded project

EPF is implementing a 3-year long Anti-Discrimination project funded by the Dutch Government. The money is being transferred annually in advance. On June 1, 2020, EPF enters into the 3rd (the last) year of the project implementation, which means programmatic and financial reports will be submitted in June 2020, and EPF envisions to get the rest of the funding for June 1, 2020 - May 31, 2021 during July 2020.

Based on the written communication with the donors, we do not expect any delays in the money transfer. EPF has never experienced any delays related to the Netherlands funding.
